ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 հունվարի 2026 թվականի №

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2025 թվականի սեպտեմբերի 30-ի №334-Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) տուգանվել է տասը միլիոն ՀՀ դրամ գումարի չափով՝ Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378-Ն որոշմամբ սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 136-րդ կետի խախտման, այն է՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սարալանջ գյուղում Ընկերության կողմից հրապարակված ջրամատակարարման գրաֆիկի խախտման համար.

բ. Ընկերությունը 2025 թվականի հոկտեմբերի 14-ի №ՄՇ/37427 գրությամբ վարչական բողոք է ներկայացրել Հանձնաժողով՝ խնդրելով անվավեր ճանաչել Որոշումը՝ այն համարելով ոչ իրավաչափ: Որպես վարչական բողոքի հիմնավորում՝ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

1) Կանոնների 139-րդ կետի համաձայն՝ Մատակարարը պարտավոր է Բաժանորդին ժամը 7:00-24:00-ն ընկած ժամանակահատվածում ապահովել ամենօրյա առնվազն վեցժամյա ջրամատակարարմամբ: Սակայն, Կանոնների 171-րդ կետի համաձայն՝ 139-րդ կետով սահմանված դրույթը «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի»,

«Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ վարձակալության պայմանագիր) կողմերի միջև 2023 թվականի դեկտեմբերի 7-ին ստորագրված №42 համաձայնագրով սահմանված Մատակարարի սպասարկման տարածքի թվով 20 գոտիների (այդ թվում՝ ՀՀ Կոտայքի մարզի Սարալանջ գյուղի) մասով ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից: Տեղեկացրել է նաև, որ Կանոնների 139-րդ կետի պահանջն ապահովելու համար՝ նշված համաձայնագրի №1 հավելվածով թվով 20 գոտիների (14 բնակավայրերի) համար սահմանված են վարձատուի (ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Տարածքային զարգացման հիմնադրամի) և վարձակալի (Ընկերության) կողմից իրականացվող միջոցառումներ, որոնք պետք է ավարտվեն 2025 թվականի վերջին,

2) Սարալանջ համայնքը սնվում է Բուժականի կապտաժներից, որից մատակարարվող ջրաքանակը 15լ/վրկ-ից նվազել է մինչև 11 լ/վրկ, ուստի 2025 թվականի ամռան ամիսներին ջերմաստիճանի կտրուկ բարձրացումով և ջրաղբյուրում ջրի նվազումով պայմանավորված, համայնքի որոշ հատվածներում արձանագրվել են ջրամատակարարման որոշակի շեղումներ, որտեղ Ընկերության համապատասխան տեղամասի աշխատակիցների կողմից կատարվել են անհրաժեշտ կարգավորումներ ժամային գրաֆիկն ապահովելու ուղղությամբ:

3) Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Սարալանջ և Արագյուղ բնակավայրերը սպասարկող ժ=100մմ ջրագիծն անցնում է Բուժական գյուղի տարածքով, որի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը ներառված չեն ՀՀ կառավարության թիվ 1662-Ա որոշմամբ ընդունված գույքի ցանկում և Ընկերության կողմից այդ բնակավայրում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ չեն մատուցվում: 2024 թվականի ընթացքում Ընկերության կողմից կատարված ստուգումների ժամանակ Բուժական գյուղի տարածքում հայտնաբերվել է, որ Սարալանջ և Արագյուղ բնակավայրերը սնող Ընկերության կողմից շահագործվող ժ=100մմ ջրագծից ապօրինի միացում է կատարվել և d=63մմ խողովակով ջուր է մղվում դեպի Բուժական: Հայտնաբերված ապօրինի ջրագիծն Ընկերության աշխատակիցների կողմից ապամոնտաժվել է, որից հետո Սարալանջ և Արագյուղ բնակավայրերի ջրամատակարարումը բարելավվել է, վերականգնվել է ջրամատակարարման սահմանված գրաֆիկը և ջրի ճնշումը, սակայն հաջորդ օրն ապօրինի ջրագիծը կրկին միացվել է d=100մմ ջրագծին: Ապօրինի սպառման համար կազմվել է արձանագրություն և

ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 1-ի թիվ 658-Ն որոշման 3-րդ կետի պահանջների համաձայն արձանագրված խախտման համար կատարվել է հաշվարկ 2 193 383 դրամի չափով, Ընկերությունը հայտնել է նաև, որ դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում Ընկերությունը ճանաչվել է տուժող և մինչ օրս հանցագործություն կատարած անձինք չեն հայտնաբերվել, օրենքով սահմանված կարգով պատասխանատվության չեն ենթարկվել:

4) Վարչական մարմնի կողմից բավարար քննարկման առարկա չի դարձել այն, որ Ընկերության կողմից պարտավորությունը չի կատարվել ֆորսմաժորային իրավիճակի հետևանքով: Պարտավորությունը ֆորս մաժորի հետևանքով չկատարելու վերաբերյալ վարչական մարմինը Որոշման մեջ հիմնավորված գնահատական չի տվել, նշված չեն Ընկերության պարզաբանումներով ներկայացված հանգամանքները չընդունելու համար հիմք հանդիսացող փաստական և իրավական հիմքերը: Քննարկման առարկա չեն դարձվել պարզաբանումներով ներկայացված հանգամանքներն ու դեպքերն առ այն, որ պարտավորությունների չկատարումը նախ և առաջ պայմանավորված է գլոբալ բնական խնդրով ջրատվության նվազմամբ, ինչպես նաև ապօրինի միացման դեպքով, այն էլ 100մմ տրամագծով ջրագծից 63մմ տրամագծով Ընկերության սպասարկման տարածքում չընդգրկված բնակավայրի խմոցի ջրամատակարարման համար, Բուժական համայնքի ղեկավարի գործողությունը, որով խոչընդոտվում է Ընկերության կողմից իր պարտավորության կատարմանը, քրեական գործի ձգձգումն անհասկանալի պատճառներով, իրավասու մարմինների կողմից այդ ուղղությամբ իրականացված ոչ բավարար քայլերը, իսկ այս ամենի համար առաջանում է պատասխանատվություն Ընկերության համար.

գ. 2025 թվականի հոկտեմբերի 14-ին հարուցվել է Որոշման վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացված վարչական բողոքի քննարկման վարչական վարույթ, ինչի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 17-ի №ՄՄ/34.4-Մ2-14/5776-2025 գրությամբ,

դ. վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը լրացուցիչ որևէ հիմնավորում կամ փաստարկ չի ներկայացրել,

ե. իրականացված վարույթի շրջանակում հաստատված է համարվել, որ՝

1) Որոշման իրավաչափությունը բխում է հետևյալ իրավանորմերից.

- Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որի համաձայն՝ Հանձնաժողովը լիցենզավորված անձանց կողմից ջրային

օրենսգրքի դրույթների, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում իր իրավասությունների սահմաններում իրավասու է տալու խախտումները վերացնելու հանձնարարականներ և կիրառելու պատասխանատվության միջոցներ, այդ թվում՝ տուգանք, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկից մինչև տասհազարապատիկի չափով.

- Կանոնների 136-րդ կետի համաձայն՝ հրապարակված ջրամատակարարման գրաֆիկը պետք է ներառի բաժանորդին ջրամատակարարմամբ ապահովելու երաշխավորված ժամանակահատվածը: Մինչև 17 ժամ տևողությամբ ջրամատակարարում ունեցող բաժանորդի ջրամատակարարումը պետք է իրականացվի ժամը 7^{00}-24^{00}-ն ընկած ժամանակահատվածում.

2) Հանձնաժողովը գտնում է, որ Որոշումն ընդունվել է օրենքներին և գործող այլ իրավակարգավորումներին համապատասխան և դրա անվավեր ճանաչման հիմքերը բացակայում են: Մասնավորապես,

- Ընկերությունը 2025 թվականի սեպտեմբերի 21-ի №ՄՇ/31772 գրությամբ հայտնել է, որ ջրամատակարարման գրաֆիկի շեղումները պայմանավորված են եղել ջրի սպառման ծավալների կտրուկ աճով, խմելու ջուրը ոռոգման նպատակով օգտագործելու դեպքերի և ջրաղբյուրներում ջրատվության նվազման հետ, որտեղ Ընկերության համապատասխան տեղամասի աշխատակիցների կողմից կատարվել են անհրաժեշտ կարգավորումներ՝ ժամային երաշխավորված գրաֆիկն ապահովելու ուղղությամբ և Սարալանջ բնակավայրի ջրամատակարարումը կարգավորված է և ստիպված չեն լինի կրկին վերադառնալ այս խնդրին և, ըստ էության ընդունել է, որ խախտվել է Կանոնների 136-րդ կետով սահմանված պահանջը, սակայն առաջարկել է ձեռնպահ մնալ Ընկերության նկատմամբ պատժամիջոցների կիրառումից, քանի որ մինչև խնդրի գլոբալ լուծումը՝ Ընկերությունը ձեռնարկում է հնարավոր բոլոր միջոցները նման եղանակային և հարակից խոչընդոտների պայմաններում սպառողներին ամենօրյա ջրամատակարարում իրականացնելու համար: Միևնույն ժամանակ Ընկերությունը նշել է, որ Բուժականի ջրաղբյուրի ջրատվությունը 15 լ/վրկ-ից նվազել է 11 լ/վրկ, սակայն Հանձնաժողովի աշխատակազմը պարզել է, որ վերջինիս Բուժականի ջրաղբյուրից տրված ջրօգտագործման թույլտվությունը 45 լ/վրկ է: Մինչդեռ Հանձնաժողովի աշխատակազմի

կողմից 2025 թվականի սեպտեմբերի 5-ին նշված բնակավայր այցելության ժամանակ արձանագրվել և հաստատվել է մեկժամյա ջրամատակարարման գրաֆիկը, այն դեպքում, երբ ջրանջատման պահին համայնքում առկա թվով 2 հատ օրվա կարգավորիչ ջրամբարները լցված են եղել ջրով, համայնքում առկա են եղել ապօրինի ջրամիացումներ, մասնավորապես՝ օրվա կարգավորիչ ջրամբարից ապօրինի ջրամիացմամբ շուրջօրյա սնվող համայնքապետարանի դիմացի ցայտաղբյուրը և համայնքի ակումբը, հետևաբար փաստվել է, որ Ընկերության կողմից բավարար աշխատանք չի տարվել համայնքի երաշխավորված ջրամատակարարման գրաֆիկը ապահովելու համար, այն դեպքում, երբ, ըստ էության, Հանձնաժողովին ներկայացվել են ոչ հավաստի տեղեկություններ:

- Իրականացված վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կանոնների 136-րդ կետի պահանջը, այն է՝ հրապարակված ջրամատակարարման գրաֆիկը պետք է ներառի բաժանորդին ջրամատակարարմամբ ապահովելու երաշխավորված ժամանակահատվածը: Տվյալ դեպքում Ընկերության կողմից իր պաշտոնական կայքում հրապարակված ջրամատակարարման գրաֆիկի համաձայն՝ Սարալանջ գյուղի ջրամատակարարմամբ ապահովելու երաշխավորված տևողությունը 4 ժամ է, իսկ ժամանակահատվածը՝ 08:00-ից 12:00-ը, մինչդեռ, ինչպես Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների (դիտարկումների), դրանց շրջանակում կատարված արձանագրությունների, տեսագրությունների, այնպես էլ Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված գրությունների արդյունքներով փաստվել է Ընկերության կողմից նշված գրաֆիկի խախտված լինելու հանգամանքը: Ավելին՝ Հանձնաժողովի 2018 թվականի մարտի 14-ի №77Ա որոշմամբ սահմանված կարգով Ընկերության կողմից ներկայացված՝ Սարալանջ գյուղի բնակիչների առևտրային հաշվառքի սարքի խախտման համար կատարված վերահաշվարկների վերաբերյալ 2025 թվականի երկրորդ և երրորդ եռամսյակների համար ներկայացված տեղեկատվությունների վերլուծության համաձայն՝ նշված բնակավայրի բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերի խախտման համար կատարված վերահաշվարկները կատարվել է հրապարակված չորսժամյա գրաֆիկով, այսինքն նշված տեղեկատվության համաձայն՝ մեկժամյա ջրամատակարարման պայմաններում առևտրային հաշվառքի սարքերի խախտման համար կատարված վերահաշվարկները կատարվել են չորսժամյա հրապարակված գրաֆիկով՝ խախտելով վերոհիշյալ բնակավայրի բնակիչների օրինական շահերը:

Ինչ վերաբերում է վարձակալության պայմանագրի կողմերի միջև 2023 թվականի դեկտեմբերի 7-ին ստորագրված №42 համաձայնագրի մասով Ընկերության

դիտարկումներին՝ հարկ է նշել, որ Կանոնների 171-րդ կետի համաձայն՝ Կանոնների 139-րդ կետով սահմանված դրույթն «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի համաձայնագրով սահմանված Մատակարարի սպասարկման տարածքի գոտիների մասով ուժի մեջ է մտնում մինչև 2026 թվականի հունվարի 1-ը՝ ըստ տվյալ համաձայնագրով սահմանված ժամանակացույցի, ուստի՝ նշված համաձայնագրով սահմանված և հետագայում 2025 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված №59 համաձայնագրով երկարաձգված ժամկետը վերաբերում է Կանոնների 139-րդ կետով սահմանված՝ բաժանորդին ամենօրյա առնվազն վեցժամյա Ջրամատակարարմամբ ապահովելու պահանջն ուժի մեջ մտնելուն, մինչդեռ տվյալ վարչական վարույթը հարուցվել է և Ընկերությունը տուգանվել է Կանոնների 136-րդ կետի խախտման համար:

- Վարույթի շրջանակում Ընկերության կողմից ներկայացված պարզաբանումները չեն կարող հիմք հանդիսանալ Ընկերությանը պատասխանատվությունից ազատելու համար, քանի որ դրանցով որևէ կերպ չի հերքվել խախտումների առկայության հանգամանքը, ներկայացված պատճառաբանությունները հիմնավորված չեն, չեն բխում գործող իրավակարգավորումներից:
- Ինչպես Ընկերության նկատմամբ 2025 թվականի օգոստոսի 21-ին հարուցված վարչական վարույթի, այնպես էլ սույն վարչական վարույթի շրջանակներում ներկայացված պարզաբանումներով չի հիմնավորվել, որ նշված խախտումը հետևանք է ֆորս մաժորի, այն է՝ առկա են եղել անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են իր կամքից անկախ, խոչընդոտել են իր գործունեությանը կամ հանգեցրել համապատասխան պարտավորությունների չկատարմանը՝ հակառակ իր գործադրած ջանքերի, մինչդեռ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

3) Որոշումների փոփոխման կամ բեկանման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 77-րդ հոդվածով սահմանված հիմքերը բացակայում են, և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, Հանձնաժողովը **որոշում է**.

1. Մերժել Ընկերության 2025 թվականի հոկտեմբերի 14-ի վարչական բողոքը և Հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 30-ի «Վեոլիա ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տուգանելու մասին» №334-Ա որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
14 հունվարի 2026թ.